

ԵՌԱՆՅՈՒՆՆԵՐԻ ԿՐՕՆԱՆՈՒՐՈՒԹՅԱՆ

Եկեղեցական վիճակի հասնելն առանց Աստուծոյ կոչման կրնայ ըլլալ համարելը գաղտնի անհաւատութիւն մը կամ անտարբերութիւն մ' է: Այս վիճակին հասնելու բաղձանքը առաջ պատանւոյ մը նըպատակին մէջ տեղ կը բռնէ, անոր յարմարող զգացմունքներ կտիրեն, և եթէ իւր հաւատքին միջ կրօնքին պահանջած սրբութիւնները լիովին կենան, Աստուծոյ կոչումը արժանի միջոցով մը իւր ուխտած նպատակին կհասնուի: Ասոր պատմական վկայութիւն մը ունինք սուրբ աւետարանին մէջ:

Պատանի մը Յիսուսի կըսէ. Այս արդապետ, ի՞նչ բարեգործութիւն ընեմ, որ յաւիտենական կենաց արժանի ըլլամ: Յիսուս պատասխանեց. պատուիրանները պահէ: Այդամենքի մանկութենէ պահած եմ, կըսէ պատանին, դեռ ուրիշ ի՞նչ պակաս ունիմ:

Ահա սուրբ տրամադրութիւն և անտուածահաճոյ պատրաստականութիւն, զոր հարկաւորապէս պէտք է ունենան աշխարհէ ուրացութեամբ կամ կրօնաւորութեամբ ապրելու փափաք կրողներն առհասարակ: Այս սուրբ տրամադրութիւնը պէտք է փնտռեն եպիսկոպոսք իրենց ձեռնադրելներուն վրայ, այսինքն՝ թէ՛ իմանկութենէ պատուիրանապահութիւն ունին, և ինքնին կամաւոր մտօք եկած են այն կոչման: Այսպիսիները կանոնաւոր և բարեխառն կեանք անցունող պատանիներ կըլլան, որոնց միտքը և սիրտը անփորձ է տպականութեան: Ինչ որ է՝ Յիսուս հաւ-

նեցաւ պատանւոյն այս հարցմանը և պատասխաններուն, մասնաւոր համակրութիւն մը ցցուց, բարեւարութեան աչք մը ձգելով վրան՝ աւելի բարձր սրբութեան մը հրաւիրեց. թէոր կուղես, ըսաւ, աւելի կատարեալ ըլլալ, ծախէ բոլոր ունեցածներդ, բաժնէ աղքատներուն և ետեւս եկոր:

Եկեղեցականներուն կոչումն ճիշդ այս արարողութիւնով կը կատարուի եկեղեցականին ներքին յօժարութեանցը և Աստուծոյ միջնորդական կոչմանց մէջ: Սակայն այս կոչումը կամ կոչման լծորդ պայմանները պատանւոյն բարի նախանձը մէկէն սառեցուցին. ծանր և անըմբերելի եկաւ իրեն իր բնական և իրաւացի ժառանգութիւններն և ստացուածքը արհամարհելը. այս մտածմունքին վրայ տրտմեցաւ, ջանք ըրաւ առջի բերան՝ որ իւր կրից և յօժարութեանց ձայնը խղզէ, չկրցաւ՝ ու ետ քաշուեցաւ:

Ասոր վրայ, աւելի դիւրին է, ըսաւ Յիսուս, հաստ պարանի մը ասեղին ծակէն անցնիլը, քան աշխարհի վայելմանց վրայ հաստատուն և անյեղի հակամիտութիւն ունեցողի մը Աստուծոյ արքայութեան հասնիլը, կամ որ նոյն է, Աստուծոյ եկեղեցւոյն մէջ պաշտօն ունենալ: Ուրեմն եկեղեցական կոչմամբ կրօնաւորական վիճակի հասնողներուն համար բացարձակ պայման մը է ամեն բան լքանել՝ մինչև իւր բնական ժառանգութիւնները, և խաչու ընթանալ կրօնի և անձնանուիրութեան գերագոյն նախատպին ձայնին ետեւէն:

Հարկ է բացատրութիւններ ընել, թէ որչափ բարձր և դժուարին սրբութիւն և արժանիք հարկաւոր են ճշմարիտ կրօնա-

ւորի մը համար: Այս վիճակին կամ պաշտաման բարձրութիւնը և գերակայութիւնը, կրօնքին բարձրութեան և գերակայութեան առնչական է, և դարձական շրջանով՝ պաշտօն և պաշտօնեայ մէկզմէկ կատորագրեն աշխարհի առջև: Բայց հասկնալու համար՝ թէ այս առնչութեան յօդակապը որչափ պինտ և անխզելի է, և որչափ պէտք է զարհուրին այս յօդաւորութենէն յանձնապատան և փոքրոգի մարդիկ, բաւական է յիշել այն տիաղոսը, զոր Պօղոս առաքեալը իրեն սեփհականած է իւր թղթոց մէջ. "Այս Պօղոս Կաթանայի Գրիստոսի":

Ըստ տեղեր այս ծանր տիաղոսը գործածած է սուրբ առաքեալը, ասկէ աւելի սիրելի և ճշգրիտ պատուանուն մը չունէր ինք զինք իւր ժողովրդեան առջև ստորագրելու համար: Այս կապը իրեն փառք կհամարէր, և իւր մարմինը պատող նիւթական շղթայները ցցնելու ատեն, անոնց տակը Վրիստոսի հետ զինքը կապող շղթայն կամ բարոյական կապը գուշակել տալ կուզէր: Արեւստանի վերակացու Ֆեստոսի հրամանաւ երբ շղթայով Առովմ ղրկուեցաւ, նոյն տեղե հրեաներուն առջև՝ իբրև իւր գործոց և ընթացից հաշիւը անոնց ներկայացուներով, իւր շղթայները կը ցցուցներ, և կըսէր. "Այս ան յուսոյն Խորայելի (Վրիստոսի) կամ՝ ի շղթայս յայստսիկ": Այս է Աստուծոյ կոչմամբ կրօնաւոր եկեղեցականութեան նուիրեալ անձին անունն ալ պաշտօնն ալ: Աստուծոյ անունն եկեղեցականք իրենց պաշտօնին, և իրենց երկնաւոր նախատիպը ինչ ճամբով որ քայլեց, անկէ միայն քալելու պարտաւոր են. աս կհաստատէ Պօղոս առաքելոյն սովորաբար

իրեն համար գործածած անունը. աս կը հաստատէ սրբոյ Աորն մերոյ Վրիգորի Առաւորչի առ միանձունս խրատուն մէջ բաժը. "Աստուծոյ ընդ Աստուծութեան և ոչ ՚ի վայր բերեալք յերկնայնոյ յուսոյն՝ պատրանօք բանտարկուին": Ար եկեղեցական կամ կրօնաւոր՝ որ այս կապոյն նուիրականութիւնը չձանչնար, երկնքի և երկրի մէջ առ կախեալ օդային այս մը կը դառնայ. կմերժէ իւր ուխտին պայմանները, կմոռնայ իւր պաշտօնին պարտքերը, և չկրնալով շղթայն խզել՝ կսկսի ինք զինք չարչարել, որոնց դարձեալ Ս. Առաւորչի հայրը գթութեամբ խրատ կուտայ. "մտօք և ամենայն անդամովք հաստատուն կալ, և անշարժ և անդրդուելի ՚ի կարգի կրօնաւորական հանդիսից": Այս կապը ամէն նիւթոյ և աշխարհի կապակցութիւն կկզէ, մահականացու մարդ մը անմահութեան էական յատկութիւններուն կմերձեցնէ, մարմնոյ և ստացուածոց բնական իրաւունքները անգամ կոչնչացունէ: Աւետարանի պատանին կրօնաւորական կամ եկեղեցական կապոյն այս ծանրակշիռ պայմանները՝ Յիսուսի հրաւերին մէջ անմիջապէս զգաց, և զանոնք իրեն համար այնչափ դժուար նկատեց, ինչպէս ընդ ծակ ասղան հաստ պարանի մը անցնելը՝ եթէ պակաս կամ կողմնակի նկատէր, ինչպէս շատերը, յայանի բան է՝ որ ոչ պիտի տրտմեր և ոչ իւր նպատակէն հրստարէր:

Արօնաւորութիւնը իւր բուն և ճշգրիտ և անթերի պայմաններովը հրեշտակական կենցաղավարութիւն մը է. հրեշտակաց օրինակը կրօնաւորութեան նախադադար օրինակն է: Արօնքը երկնքի մէջ հրեշտակները և երկրի մէջ մենաւոր կենօք պա-

որդնեք իրեն պաշտօնեայ կճանչնայ: Աստուած հրեշտակները իրեն պաշտօնեայ կր ճանչնայ, և պատգամաւորութեան համար զանոնք կգործածէ իւր և մարդկութեան մէջ. Ահեղեցին ալ կրօնաւորները իւր հարկաւոր պիտոյից մէջ կգործածէ: Հրեշտակները իրենց պատգամաւորութեան մէջ մարդու կերպարանք կառնէին, և տեսնող մը, ինչպէս Տուրիա, չէր կարծէր՝ թէ ասիկա զերբնական աշխարհի բնակիչ է, և պաշտօնին հոգը դուխտանելուն պէս շուտով իրենց տեղը կդառնային: Այսպէս ալ Աստուծոյ եկեղեցւոյն պէտքը կպահանջէ, որ երբեմն մենաստաններու մէջ հրեշտակային կենօք կամ առանձնութեամբ անորող մը յաշխարհ ելլէ. բայց անոր ծառայութեան սահմանը կրօնքին կամ աւետարանին օգտէն անդին չանցնիր, որչափ այս պէտքը շարունակէ՝ նոյնչափ պէտք է որ մնայ, և պէտքը դադրելուն պէս իւր բուն վիճակը դոյ մտնէ:

Հարցնէ որ թերեւս. Աւելի լաւ չե՞ որ կրօնաւորք քաղաքի և աշխարհական յարաբերութեանց մէջ շարունակ մնալով հանդերձ՝ իրենց վիճակին կապոյն նկատմամբ հաստատուն երկիւղածութիւն մը ալ պահեն: Այս կերպին որչափ դժուար բլալը Ս. Ասկերերան նմանութեամբ մը կրացատրէ. "Չեն տեսներ, ինչպէս են, կրսէ, մարմնոյ աչքերը. երբ միշտ ծխոյ մէջ ըլլան արտունք կրերեն, երբոր խաղաղ և բարեխառն օդոյ և լճակներու մէջ զքօսնուն՝ առողջ և քաջատես կըլլան: Այսպէս ալ հոգւոյն կամ մտաց աչքը, եթէ հոգեւոր խօսից լծրը պատի՛ սուրբ, յըստակ և քաջատես կըլլայ. իսկ եթէ աշխարհի ծխոց մէջ բզբաղի՛ բիժ և արտա-

տունք կրերէ, և սարսափելի ողբերով կուլայ և աստ և անդ": Ս. Գրիգոր Լուսաւորիչ հայրն ալ հրամայելու ատեն՝ որ կրօնաւորք աշխարհական իրքերու չխառնուին, կրսէ. "Աշխարհական զբաղմունքները մտքերնիդ և զբայարանքնիդ կըմթնցունեն, և որդի խաւարի կընեն": Հարցնէ որ թերեւս դարձեալ. ի՞նչ օգուտ վանքերու կամ եղբայրանոցներու մէջ անգործ առանձնութեամբ նստել: Ասոր ալ երանելի Ազնիկ վարդապետը պատասխան կուտայ. "Լաւ է, կրսէ, անգործ մեղուն՝ քան ժիր պիճակը":

(Շարունակելի):

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՏԵՂԱԳՐԱԹԻՒՆ ՄԵՐՄԱՀԻՆՈՅ (1)
ՎԱՆԱՅՆ

Ի Շ Ի Ր Ա Կ:

Մարմաշէն անուանեալ հոյակապ եկեղեցին շինեալ յափն Ախուրեան գետոյ ի Շիրակ՝ ի Վահրամայ Պաշաւունջոյ, յընդարձակ ձորամիջին ի տափարակ վայրի, ի հիւսիսոյ արեւմտից մերձ ի շրջապատ լեւինան Տայոց գաւառի յայժմեան տիրակառութեան Պուսաց յարեւելեայ մասին Շիրակայ:

Երեք հոյակապ եկեղեցիք են կոփածոյ կարմիր քարամբք, գմբեթաւորք և կամարազարդք արտաբուստ:

Միջին մեծն, որ և Մարմաշէն է անտին. երկայնութիւն նորա յառաջոյ բնմին ցղունն արեւ-

(1) Մարմաշէն կոչեցեալ վանք, է ի դիւղն Ղանկիմայ աստեցեալ, յիդր Ախուրեան գետոյ ի Շիրակ իմիւսիսոյ Այլքսանդրապոլու: